

**ՍՈՒՐԲ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՔԱՅԱՆԱՅԻՑ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԱՎԱՏՐԱԼԻԱՅԻ ԵՒ ՆՈՐ ՁԵԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՍՈՒՄ**

Մարտի 1-ին, Ավստրալիայի և Նոր Ձեւանդիայի Հայոց թեմի հոգևոր առաջնորդ՝ գերաշնորհ Տ. Աղան Արք. Պալեոզեանի գլխավորությամբ Սուրբ Ղևոնդյանց քահանայից հիշատակության օրը հանդիսավորությամբ նշվեց Սիդնեյի Սուրբ Հարություն եկեղեցում:

Տոնի առիթով Ավստրալիայի Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու հոգևորականաց դասը և հավատացյալ ժողովուրդը մեծ խանդավառությամբ հավաքվել էին Սիդնեյի Սուրբ Հարություն առաջնորդանիստ եկեղեցում՝ մասնակցելու տոնակատարությանը:

Տոնի առիթով մատուցվեց Սուրբ և անմահ Պատարագ, օրվա պատարագիչն էր արժանապատիվ Տ. Ավետիս քհն. Համբարձունյանը: Պատարագի ընթացքում օրվա խորհրդի մասին հավուր պատշաճի քարոզ խոսեց Մելբուռնի հայոց համայնքի հոգևոր հովիվ՝ հոգեշնորհ Տ. Կիրակոս արք. Դավթյանը, հատկանշելով, որ «Ս. Ղևոնդյանց նահատակության խորհուրդը դարեր շարունակ ոգևորել ու ոգևորելու է մեր ժողովրդին, որն իր 1700-ամյա քրիստոնյական պատմության ընթացքում ամենա դժվար պահերին իր ոգեշնչումը և իր հոգևոր կյանքը վերապրելու օրինակն է ստացել Ղևոնդյանց սուրբերի նահատակության պատմությունից»:

Պատարագից հետո առաջնորդարանին կից «Էդգարյան» սրահում տեղի ունեցավ օրվա խորհրդին նվիրված բանախոսություն: Բանախոսությանը բովանդակալից ելույթով ներկաներին հանդես եկան հոգեբան՝ Իդա Սողոմոնյանը և լրագրող՝ Մարինե Ավագյանը: Ի. Սողոմոնյանը, իբրև գլխավոր բանախոս, անդրադարձավ Ղևոնդյանց քահանայից տոնի խորհրդին, ինչպես նաև ավետարանական մեջբերումներով հանգամանորեն ներկայացրեց հոգևորականների առջև ծառայած արդիական խնդիրներն ու մարտահրավերները, հատկանշելով երիտասարդներին առավել հետաքրքրող ինտերնետային կայքերի միջոցով եկեղեցականին հաղորդ դառնալու հանգամանքը:

Հանդիսությունը եզրափակվեց Գերաշնորհ Սրբազան Հոր հայրական պատգամով և աղոթքով:

Այնուհետև տեղի ունեցավ ճաշկերույթ:

**Դիվան Առաջնորդարանի
Ավստրալիո և Նոր Ձեւանդիայի**